ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

«ՍԹԱՐ-ԼԱԲ» ՍՊԸ-ն ԷԱՃԱՊՁԲ-2026/15-9-ԵՊԲՀ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
107	ЛАБ-PRO	ЛАБ-PRO ШВОС 120.84.230 С20	ЛОиП	Աշխատանքային մակերեսը՝ մոնոլիտ կերամոգրանիտ է, որը առնվազն 20 մմ ամբողջական անխափան ապակենման ծածկույթով սալիկ է: Աշխատանքային մակերեսի չափերը՝ 1080 × 700 × 1260 մմ ։ Առջևի ուղղորդող կանգնակները՝ ալյումինե պրոֆիլից են, փոշեներկված մոխրագույն ներկով: Աջ կանգնակում տեղադրված են լուսավորության անջատիչը և 2 ջրացայտերից պաշտպանված վարդակ՝ կափարիչով, 3.2 կՎտ, պաշտպանվածության աստիճանը IP 54: Առջևի եզրաշերտը՝ թթվակայուն հղկված չժանգոտվող պողպատից է: Հետին, վերին և կողային պանելները՝ մետաղից, փոշեներկված մոխրագույն ներկով, «շագրենի կաշվի» ֆակտուրայով: Աշխատանքային բոքսի ներքին մակերեսները երեսպատված են քիմիապես կայուն HPL պլաստիկով: Ունի կոփած

					ապակուց 2 բարձրացվող փեղկ՝ տեղադրված ալյումինե շրջանակների մեջ, բարձրացման միջակայքը՝ 0–780 մմ: Բարձրացման ժամանակ չեն փոխվում պահարանի ընդհանուր չափերը: Վերին անշարժ փեղկը կոփած ապակուց է՝ տեղադրված ալյումինե շրջանակի մեջ: Վերին պանելի վրա առկա է լուսադիոդային փոշեջրապաշտպան լուսատու՝ 2 × 10 Վտ, պաշտպանվածության աստիճանը IP 65, որն աշխատանքային տարածքից առանձնացված է 4 մմ հաստությամբ կոփած ապակիով, քարշիչի 3 մակարդակ՝ հեշտ հանվող ծածկերով: Ձախ կողային պանելի վրա տեղադրված է սպասարկման մոդուլ՝ սառը ջրի մատակարարման խողովակաճյուղով և պատին ամրացված պոլիպրոպիլենային լվացարանով: Սառը ջրի մատակարարման փականը տեղադրված է բոքսի ձախ կանգնակում: Հակակշիռները տեղադրված են առջևի կանգնակ-պիլոններում և հեշտությամբ սպասարկվում են: Հավաքածուն ներառում է օդափոխման համակարգի խողովակ, պոլիպրոպիլենից պատրաստված պահեստավորման պահարան (կորպուսը, ֆասադային մասը և բռնակները պոլիպրոպիլենից են)՝ պոլիամիդային փականներով: Պահարանն ունի 2 փեղկ՝ յուրաքանչյուրի ներքին չափերը՝ 542 × 465 × 497 մմ, յուրաքանչյուրում՝ 1 հանվող դարակ: Նախատեսված է օդափոխություն՝ 2 մակարդակով: Օդափոխման խողովակի կցաշուրթի տրամագիծը 100 մմ է: Ունի կարգավորվող հենակներ: Ապրանքի արժեքը ներառում է նաև պահարանի հավաքման և տեղադրման ծառայությունը: Երաշխիքային ժամկետ առնվազն 1

				տարի: Ապրանքը նոր է, չօգտագործված:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

СТАР-ЛАБ ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԷԱՃԱՊՁԲ-2026/15-9-ԵՊԲՀ ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
107				